ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

25.04.2019
342-05

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի
ղեկավար Գևորգ Փարսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Փարսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Գանձասար» մարզական կենտրոն ՍՊԸ տնօրեն՝ Գառնիկ Օհանջանյանը և խնդրել աջակցել իրեն տեղեկություն ստանալու հարցում:

Գառնիկ Օհանջանյանը 2019 թ.-ի փետրվարի 15-ին ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքից ստացել է գրություն այն մասին, որ ք. Կապան Թումանյան փողոց թիվ 11 հասցեում գտնվող համայքնի սեփականությունը համարվող 1,929020 հա ընդհանուր մակերեսով հողատարածքի վարձակալությունից Կապան համայնքը հրաժարվում է և սույն գրությունը ստանալուց 3 ամիս անց պայմանագիրը կհամարվի լուծարված: Գրության մեջ, ըստ վարձակալության պայմանագրի 5.5 կետի, պահանջվում էր սույն գրությունը ստանալու պահին տարածքում եղած ողջ գույքը բաժանելի և անբաժանելի թողնել հողամասում:

«Գանձասար» մարզական կենտրոն ՍՊԸ տնօրեն Գառնիկ Օհանջանյանը գրությունը ստանալուց հետո 2019 թվականի մարտի 18-ին տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին, սակայն հարցումը մնացել է անպատասխան:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները:

1. Ինչու՞ եք հրաժարվում «Գանձասար» մարզական կենտրոն ՍՊԸ-ի հետ կնքած վարձակալության պայմանագրից և վարձավճարից, օրենքով սահմանված ի՞նչ նպատակ եք հետապնդում:

2. Ինչու՞ եք սահմանել հողատարածքում ամրակայված ամբողջ գույքը բաժանելի և անբաժանելի թողնել հողամասում և ո՞ր օրենքով է սահմանված սեփականատիրոջը նման պահանջ ներկայացնելու ձեր լիազորությունը:

3. Արդյո՞ք պատրաստվում եք շուկայական գնով փոխհատուցել ընկերությանը պատկանող մարզահամալիրի և ողջ գույքի արժեքը:

4. Արդյո՞ք վարձակալության իրավունքից հրաժարվում եք՝ նպատակ ունենալով առանց նախնական համարժեք փոխհատուցման տարածքը դարձնել Կապան համայքի սեփականությունը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան